

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ-ԲԵՄԱԿԱՆՔ

Շր. 2 Յունիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Առաքելոց վերնամատրան մէջ: Ժամարարն էր Տ. Աւետիս Արդ. Իփրանեան:

- Հոգեգալստեան նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

- Գիշերասկիզբին Մայր Տաճարին մէջ պաշտուած «Եկեցե՛ք» Հսկման կարգերուն նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Կիր. 3 Յունիս.- Հոգեգալստեան Առաւօտեան ժամերգութեան աւարտին կատարուեցաւ «Անդաստան» հանդիսապետութեամբ Տ. Սեւան Եպս. Դարիպեանի:

Օրուան հանդիսատէր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց Պատրիարք Սրբազան Հայրը: «Հոգի Աստուծոյ» երգէն առաջ, իր քարոզին միացուց Սրբոյն Յովհաննու Ոսկերքեանի աղօթքը, ուղղուած Ս. Երրորդութեան երեք անձերուն: Սպասարկողներն էին Տ. Աւետիս Արդ. Յովհաննիսեան, եւ Տ. Թեոդորոս Արդ. Զաքարեան, իսկ բուրվառակիր-վարդապետներն էին Տ. Նորայր Արդ. Գազազեան եւ Տ. Իսահակ Արդ. Մինասեան:

- Կէսօրէ ետք, Տ. Արիս Եպս. Շիրվանեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը գնաց դէպի վերջին ընթրեաց վերնատունը, ուր կատարուեցաւ ժամերգութիւն, ապա Ս. Փրկիչ կատարուեցաւ հոգեհանգստեան կարգ: հանգուցեալ Պատրիարքաց, Լուսարարապետաց եւ միաբանից հոգիներուն ի հանգիստ:

Շաբաթ 9 Յունիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Դիտաղի: Ժամարարն էր Տ. Գրուսան Վրդ. Ալեանեան:

Կիր. 10 Յունիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Տ. Նուրիան Արք. Մանուկեան: Ժամարարն էր Տ. Թեոդորոս Արդ. Զաքարեան:

- Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց հանդիսապետն էր Լուսարարապետ Տ. Նուրիան Արք. Մանուկեան:

Բշ. 11 Յունիս.- Ս. Կուսանացն Հռիփսիմեանց: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ս. Պատարագը մատուցուեցաւ եկեղեցւոյ աւանդատան Ս. Հռիփսիմէի մատրան մէջ: Ժամարարն էր Ս. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Ուր. 15 Յունիս.- Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Տ. Սեւան Եպս. Դարիպեան:

Շր. 16 Յունիս.- Ս. Գրիգոր Լուսաւորչին Ելն ի վերապէն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան Ս. Լուսաւորչի Սեբանին վրայ: Ժամարարն էր Տ. Բագրատ Արդ. Պուրնէֆեան:

- Կէսօրէ ետք հանդիսապետն էր Լուսարարապետ Տ. Նուրիան Արք. Մանուկեան «Կարողիկէ եկեղեցւոյ» նախատօնակին, եւ ծնրաղիք «Տէր Ողորմեա» երգուեցաւ ըստ սովորութեան:

Կիր. 17 Յունիս.- Տօն Կարողիկէ եկեղեցւոյ Սրբոյ Էջմիածնի: Առաւօտեան ժամերգութեան աւարտին կատարուեցաւ «ԱՆդաստան»: Հանդիսապետն էր Լուսարարապետ Տ. Նուրիան Արք. Մանուկեան:

Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Համարարձում Վրդ. Քէշիշեան: «Հայր Մեր»էն առաջ կատարուեցաւ «Հայրապետական Մաղրանք» վասն Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր:

Շր. 23 Յունիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Դիտաղի: Ժամարարն էր Տ. Էմմանուէլ Արդ. Աբաջանեան:

Կիր. 24 Յունիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան: Ժամարարն էր Տ. Ընծանուէր Արդ. Բարխանեան:

Ուր. 29 Յունիս.- Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Լուսարարապետ Տ. Նուրիան Արք. Մանուկեան:

Շր. 30 Յունիս.- Ս. Գրիգոր Լուսաւորչին (Գիւտ-նշխարաց): Մայր Տաճարի Ս. Մակարայ մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Աւետիս Արդ. Յովհաննիսեան:

Կիր. 1 Յունիս.- Երեկոյան Ս. Գրիգոր Լուսաւորչի տօնին առթիւ, Ս. Պատարագը մատուցուեց Երուսաղէմի Հրեական բաժնին մէջ գտնուող եւ մեծ Սուրբին առնը կրող եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Տ. Նուրիան Արք. Մանուկեան: Ժամարարն էր քարոզիչն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շերպէրեան:

Դշ. 4 Յունիս.- Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Տ. Սեւան Եպս. Դարիպեան:

Եշ. 5 Յունիս.- Ս. Թարգմանչաց Վարդապետացն մերոց Սահակայ եւ Մեսրոպայ: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի

Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Գուսան Վրդ. Այնանան:

Եր. 7 Յուլիս.- Ս. Տրդատայ Թագաւորին մերոյ եւ Աշխէն Տիկնոջ եւ Խոսրովիդէտոյն: Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Համարձում Վրդ. Քէշիշեան:

- Կէսօրէ ետք, նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Տ. Սեւան Նպս. Դարիպեան:

Կիր. 8 Յուլիս.- Գիւտ Տփոյ Ս. Աստուա-
ծածնի: Ս. Պատարազը մատուցուեցաւ Տիրամօր Ս. Գեորգիմանին վրայ: Հանդիսապետն էր Տ. Արիս Նպս. Ծիրվանեան: Ժամարարն էր Բարդուղիմէ էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Ուր. 13 Յուլիս.- Նախատօնակին ի Ս. Յակոբ Հանդիսապետն էր Տ. Արիս Նպս. Ծիրվանեան:

Եր. 14 Յուլիս.- Ներկոտասան Առաքելոյն
Քրիստոսի: Ս. Պատարազը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Պողոսի վերնամատրան մէջ: Ժամարարն էր Տ. Բագրատ Արդ. Պուրնէքեան:

Կիր. 15 Յուլիս.- Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Թարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Նպս. Դարիպեան: Ժամարարն էր Բարդուղիմէ էր Տ. Էմմանուէլ Արդ. Արաքանեան:

Ուր. 20 Յուլիս.- Նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարին կից Ս. Էջմիածին մատրան մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Տ. Նուրհան Արք. Մանուկեան:

Եր. 21 Յուլիս.- Յիշատակ Տապանակին: Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Էջմիածին: Ժամարարն էր Տ. Իսահակ Արդ. Մինասեան:

- Կէսօրէ ետք Այլակերպութեան մեծահանգէս նախատօնակին եւ Տեառնեղբայր Յակոբոս Առաքելի Յիշատակի հանդէսին նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը: Ապա «Օրհնեցէ՛ք Տէր» շարականի երգեցողութեամբ միաբանութիւնը բարձրացաւ Պատրիարքարան:

Գիշերակիցին Մայր Տաճարին մէջ պաշտուած «Նկեցե՛ք» ի եւ Հսկման կարգերուն նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Կիր. 22 Յուլիս.- Վարդավառ (Տօն Այլակերպութեան Տեառն): Ժամերգութեան աւարտին կատարուեցաւ «Անդաստան» հանդիսապետն էր Լուսարարապետ Տ. Նուրհան Արք. Մանուկեան: Օրումն հանդիսաւոր Ս. Պատարազը Աւագ Սեղանին վրայ մատուցեց եւ Բարդուղիմէ Պատրիարք Սրբազան Հայրը: Սպասարկող վարդապետներն էին Տ. Բագրատ Արդ. Պուրնէքեան եւ Տ. Համարձում Վրդ. Քէշիշեան, իսկ բուրվառակիր վարդապետներն էին Տ. Իսահակ Արդ. Մինասեան եւ Տ. Անուոն Արդ. Յովհաննիսեան:

Բշ. 23 Յուլիս.- Յիշատակ Մեռելոց: Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Ընծանուէր Արդ. Բարսեղանեան:

Ուր. 27 Յուլիս.- Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետն էր Տ. Արիս Նպս. Ծիրվանեան:

Եր. 28 Յուլիս.- Թաղէտսի Առաքելոյն եւ Սանդիտոյ կուսին: Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Անուոն Արդ. Յովհաննիսեան:

Կիր. 29 Յուլիս.- Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Թարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Նպս. Դարիպեան: Ժամարարն էր Տ. Գուսան Վրդ. Այնանան:

Եր. 4 Օգոստ.- Արքայն Որդւոց եւ Թա-
ռանց Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ՝
Արիստակիսի, Վրթանիսի, Յուսկաննի, Գրիգորիսի եւ Դանիէլի:

Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց Զարչարանաց Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Աւետիս Արդ. Իփրանեան:

Կիր. 5 Օգոստ.- Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Թեոդորոս Արդ. Զաֆարեան:

Եր. 11 Օգոստ.- Արքայն Գրիգորի
Աստուածաբանին: Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Կիր. 12 Օգոստ.- Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Թարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Նպս. Ծիրվանեան, որ կատարեց «Խաղողորհնէ՛ք» ի արարողութիւնը: Ժամարարն էր Տ. Բագրատ Արդ. Պուրնէքեան:

Բշ. 13 Օգոստ.- Այսօր սկսաւ Ս. Կոյսի Վերափոխման Տօնը կանխող հանդիսաւոր Ս. Պատարազներու մատուցումը Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարի մէջ:

Եր. 18 Օգոստ.- Նփեստսի Ս. Ժողովոյն (431): Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Աստուածածին: Ժամարարն էր Տ. Նորայր Արդ. Գազազեան:

Կիր. 19 Օգոստ.- Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Թարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Նպս. Դարիպեան: Ժամարարն էր Տ. Իսահակ Արդ. Մինասեան:

Ուր. 24 Օգոստ.- Նախատօնակին ի Ս. Էջմիածին: Հանդիսապետն էր Տ. Սեւան Նպս. Դարիպեան:

Եր. 25 Օգոստ.- Տօն Շողակաքի Ս. Էջմիածնի: Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Աստուածածին: Ժամարարն էր Տ. Գուսան Վրդ. Այնանան:

- Կէսօրէ ետք, Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր, ինքնաշարժերով իջան Գերսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր պաշտօնեցան ժամերգութիւն եւ նախատօնակ:

- Գիշերասկիզբին, նոյն վայրին մէջ պաշտօնեցաւ «Եկեցե՛ք»ի եւ Հսկման ժամերգութիւնները: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Ծիրվանեան:

Կիր 26 Օգոստ.- Վերափոխումն Ս. Աստուածածնին: Առաւօտուն, Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբան Հայրեր, ինքնաշարժերով իջան Գերսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան Սուրբ Պատարագը մատոյց եւ քարոզեց Տ. Արիս Եպս. Ծիրվանեան: Պատարագիչ Սրբազանը հանդիսապետեց «Անդաստան»ին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Մայիս 26-28.- Հայաստանի մէջ Քրիստոնէութեան Պետական Կրօն հռչակման 1700 ամեակին քացառիկ առիթով, Մեծի Տանն Կիլիկիոյ Դաւական Արամ Ա. Կաթողիկոս կատարեց Միւռոն Օրհնէֆի արարողութիւն: Պատրիարք Սրբազան Հօր ուղղուած հրաւերին ընդառաջելով, Անթիլիասի մէջ կատարուող հանդիսութեան ներկայ գտնուեցան Ս. Արտոյոյ Լուսարարապետ Նուրհան Արք. Մանուկեան եւ Տ. Արիս Եպս. Ծիրվանեան: Լուսարարապետ Սրբազանը մասնակցեցաւ քացօքայ խորանի վրայ նուիրագործուող Ս. Միւռոնի Օրհնութեան արարողութեան:

Դշ. 12 Յունիս.- Երեկոյեան, Ռուսաստանի Դաշնութեան Ազգային Օրումն տօնակատարութեան առիթով, Իսրայէլի մէջ Ռուսիոյ Հիւպատոս Միխայէլ Պոզքամովին հրաւերով, Թէլ Աւիվի հիւրանոցներէն մէկուն մէջ սարքուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Տ. Արիս Եպս. Ծիրվանեան եւ Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Բշ. 25 Յունիս.- Երեկոյեան, Ս. Յովհաննէս (St. John) Ակնաբուժական Հիւանդանոցին մէջ, Աւետարանչի եւ Առաքելի տօնին առիթով, հիւանդանոցի Տնօրէն Մայիլ Քուզի կողմէ կազմակերպուած հիւրասիրութեամբ ներկայ գտնուեցան Պատրիարք Սրբազան Հայրը ընկերակցութեամբ Տ. Արիս Եպս. Ծիրվանեանի եւ Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեանի:

Դշ. 27 Յունիս.- Առաւօտեան, Երուսաղէմի

Երովպական Օրթոտոքս Եկեղեցւոյ նոր առաջնորդ նշանակուած Ապունէ Քիւսթոսի ժամանումին առիթով, Ս. Յարութեան Տաճարէն ներս ընդունելութեան հիւրընկալներ եղան Արիս Եպս. Ծիրվանեան, Համբարձում Վրդ. Քէշիշեան, եւ Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան (Տնույ), Յոյն եւ Ֆրանչիսկեաններուն հետ:

Դշ. 4 Յունիս.- Երեկոյեան, Ամերիկայի Միացեալ Նահանգաց Անկախութեան 225րդ տարեդարձի առթիւ, Ամերիկեան Ընդհանուր Հիւպատոս Ռոնալտ Սըլիշերի հրաւերին ընդառաջելով, Երուսաղէմի Նոթրը Տամ Կեդրոնին մէջ սարքուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Պատրիարք Սրբազան Հայրը ընկերակցութեամբ Տ. Արիս Եպս. Ծիրվանեանի եւ Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեանի:

Եշ. 12 Յունիս.- Երեկոյեան, Ֆրանսական Ազգային Տօնի 212րդ տարեդարձի առթիւ, Ֆրանսական Ընդհանուր Հիւպատոս Տէնիս Բիւտոնի կողմէ, Երուսաղէմի Ֆրանսական Ընդհանուր Հիւպատոսարանի պարտէզին մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Պատրիարք Սրբազան Հայրը, Տ. Արիս Եպս. Ծիրվանեան, Տ. Սեւան Եպս. Դարիպեան եւ Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Եր. 14 Յունիս.- Երեկոյեան, Ֆրանսական Յեղափոխութեան 212րդ տարեդարձի առթիւ, Ֆրանսական Ընդհանուր Հիւպատոս Տէնիս Բիւտոնի կողմէ, այս անգամ Երուսաղէմի Ֆրանսական Աստուածաշնչեան Հնագիտական Կեդրոնին մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Պատրիարք Սրբազան Հայրը, Տ. Արիս եւ Տ. Սեւան Սրբազանները եւ Աւագ Թարգման Հայրը:

Դշ. 17 Յունիս.- Պաղեստինեան Իշխանութիւնը ներկայացնող 'Orient House'ի նախագահ Ֆէյսալ Աքրուլֆադեր Ալ-Հուսէյնիի թաղման առիթով կազմակերպութեան շէնքին մէջ տեղի ունեցած յուղարկութեան արարողութեանը մասնակցեցան Տ. Արիս Եպս. Ծիրվանեան եւ Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Եր. 28 Յունիս.- Երեկոյեան, Անկլիքան Եկեղեցւոյ Քէմքըրպըրիի Արքեպիսկոպոս ձորն Գերիի եւ Իրլանտայի Անկլիքան Եկեղեցւոյ պետ Ռոպերթ Իմզի Ս. Երկիր այցելութեան առիթով կազմակերպուած հիւրասիրութեամբ ներկայ գտնուեցան Տ. Արիս Եպս. Ծիրվանեան եւ Տ. Իսահակ Արդ. Միմասեան: Այնուհետեւ, Երուսաղէմի Եկեղեցիներու միւս պետերու հետ միասին անոնք մասնակցեցան Երուսաղէմի Ս. Գեորգ Անկլիքան Եկեղեցւոյ կողմէ տրուած ընթրիքին: Արիս Սրբազան բարեմաղորութիւններ ըրաւ Քէմքըրպըրիի

Արքեպիսկոպոսին, Պատրիարք Սրբազան Հօր անունէն (որ Ս. Էջմիածին կը գտնուէր)

Գշ. 31 Յուլիս.- Նկատի առնելով ներկայի փառապաշտեցեալ անկապումն եւ անբաղձալի վիճակը, Լատինաց Պատրիարքարանին մէջ տեղի ունեցաւ Երուսաղէմի Եկեղեցիներու հոգեւոր պետերու ժողով: Հայոց Պատրիարքարանէն մասնակցեցաւ Արտաքին եւ Էփիմեոնիք Յարաբերութեանց պատասխանատու Տ. Արիս Եպս. Շիրվանեան: Ժողովի ատեն որոշուեցաւ Աղօթքի Շարաք յայտարարել յառաջիկայ Օգոստոսի 15էն մինչեւ Օգոստոսի 28ը, խաղաղութեան նպատակով կատարելով մասնաւոր պաշտամունք եկեղեցիներում մէջ:

Բշ. 18 Օգոստ.- Պատրիարք Սրբազան Հայրը ընդունեց այցելութիւնը Իսրայէլի Պետութեան կողմէ Հայաստանի եւ Վրաստանի Դեսպան նշանակուած Տիկին Ռիվա Գօհէնը, ընկերակցութեամբ իր ամուսնոյն եւ Երուսաղէմի մէջ Հայաստանի Պատույ Հիւպատոս Տիար Յովակ Մումեանի: Տիկին Գօհէն իր պաշտօնը պիտի ստանձնէ Օգոստոս ամսու վերջերը, եւ Հայաստան պիտի այցելէ Սեպտեմբերի մէջ:

Եր. 18 Օգոստ.- Գաղութիս մանուկներու «Ամառնային դասընթացքի արարման հանդէսին» նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը, որ տեղի ունեցաւ ՀԵՄԻ Թէֆէեան Սրահին մէջ՝ ծնողներու մասնակցութեամբ:

Երեկոյթին յայտագիրը վարեց Տիկ. Գարինէ Սաման գնահատելով Տիկին Մարօ Զաֆարեանի եւ իր օգնականներու նուիրեալ աշխատանքը: Մանուկներ եւ պատանիներ երգեցին, պարեցին եւ զանազան զործիքներով եւ քմրկահարութեամբ նուագեցին: Պատրիարք Սրբազան Հօր փառաբանքի խօսքերէն յետոյ, ներկաները դիտեցին ձեռնային աշխատանքները որոնք ցուցադրուած էին սրահին մէջ:

Գշ. 22 Օգոստ.- Պատրիարք Սրբազան Հայրը Միաբանութեան անդամներուն ընկերակցութեամբ այցելեց Յունաց Պատրիարքարան շնորհաւորելու ընտրութիւնը Յունաց նորընտիր Իրէնիոս Պատրիարքին, որ Յունաստանի մայրաքաղաք Աթէնքի մէջ Երուսաղէմի Պատրիարքին փոխանորդ ներկայացուցիչն էր քաղուի տարիներ: